


ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԻՇԱԲԹԻ ԵՒ ՀԱՐԱԹ

Rev. Père G. Kalémkarian Mechitaristengasse
No 4 Vienne



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պոլիտիկայի համար Տարեկան 12 ֆր.
» Գեղարվեստի 6 ֆր.
Արտասանման համար (Երկու քիչ մեկ ծրարով) Տարեկան 14, փոխարենայ 7 ֆր.
ԿԱՆԻՒԻ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եւայլն դրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — ՎԱՌՆԱ (Պոլիտիկա)
Редация на вѣстникъ
«И р а в у н к ъ»
ВАРНА (България)
Réduction du journal
„I r a v o u n k“
V A R N A (Bulgarie)

Խնայարարական ուղղեալ գրութիւն
է՛ք չե՛ն որկուր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոգեով: Կամ մասամբ:
Մանուցման տղը 20 սանթիմ. երե-
փն աւելի անգամներու համար 20 0/0
գնել կը լինի:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՇԽԱՐՀԻ ԿԵՂԾ ԱՊԻԱՐԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

—)o(—
Ռէնի զինուորական դատարանէն
Տրէյֆիսի գէմ արձակուած վերջին
վէճը: Համաշխարհային մեծագոյն
աղմուկ մը յարուց. դատապարտ-
եալ հրեային կարծեցեալ անմեղու-
թիւնը քրեթէ ամբողջ քրիստոնե-
այ աշխարհի արդարասէր զգա-
ցումը ուժգնօրէն յուզեց. այս
յուզումը միայն սրտերու մէջ չամ-
փոփոցեալ, այլ վրէժխնդրական
զուռ շարժումներ ու այլանդակ
բացադանջութիւններ ալ յառաջ
բերաւ: Ամերիկայի Ս'իացեալ Նա-
հանգներէն սկսած Եւրոպայի մեծ
ու փոքր ազգերը ու ժողովուրդ-
ները իրենց գրագէտներով ու թեր-
թիւով, իրենց բարոյախօսներով
ու ընկերական վարդապետներով
աղբու բողբոջներ բարձան, Ֆրան-
սայի դատարանները անօրէն
հաշակեցին և անդ տեղ գաղղիա-
կան հիւպատոսարանները խոշոր
ցոյցերով անպատուելոյ չափ յա-
ռաջ գացին: Մինչև իսկ 1900ի
ցուցահանդէսին չի մասնակցելու
լուրջ առաջարկութիւններ եղան:

Այս ամենը եղտն այո՛, յանուն
արդարասիրութեան, ի պաշտպա-
նութիւն անմեղ կարծուած դա-
տապարտեալի մը, և ամենայն օ-
րինաւորութեամբ կազմուած դա-
տարանի մը վճռոյն դէմ: Է՛հ,
քրիստոնեայ աշխարհը արդարու-
թեան ո՛րչափ նախանձախնդիր է
եղեր:

Բայց եթէ անգամ մը հարցը-
նենք պոպոջտացողներուն թէ՛
ներկայ ժամանակներուս մէջ հը-
րապարակային մեծ չարիք մը
գործողը միայն Ռէնի դատարանն
էր, թէ չարիքներու ամենամեծերը,
ո՞րքադործութեանց ամենաբաւոյնե-
լիները գործող ու գործադիր տը-
ւող քաղաքի գլուխներ ալ կան:
Այո՛, թագաւոր մը որ մինչև
այսօր իր գահոյից պատուան-
դանին տակ միլիոնաւոր քրիս-
տոնեաներու կողորդը կը սեղմէ
արիւնոտ մաքիւններով և միեւնոյն
ատեն ժպտալից դէմքերով կող-
ջուուի քրիստոնեայ աշխարհի

վեհափառներէն ու վեհաշուքնե-
րէն: Արդ, ո՛ւր կը մնայ այդ
աշխարհի մարդասիրութեան ու
արդարադատութեան աստիճանը:
Օսմանեան բռնաւորը իր հար-
իւր հազարաւոր զոհերէն վերջի,
երբ դեռ այսօր, այս վայրկեանիս
չարեաց մեծագոյնը կը գործէ,
ամբողջ ազգ մը փճացնել կը ջա-
նայ—ինչ որ կը վկայեն նոյն կե-
քրիստոնեայ աշխարհի ամենամեծ
«օսկան»ները, ինչպէս «Թան»ը
—ինչ կընեն այդ մարդասէրները,
այդ արդարասէրները:

Է՛հ, անոնք հրէայ մը ունին
պաշտպանելու, Տրէյֆիսի մը ու-
նին արդարացնելու: Իբրեւ թէ
միակ դժբախտը այդ եղած ըլլար
և կամ դա ամբողջ ազգէ մը ա-
ւելի արժէք ունեցած լինէր: Սա-
կայն այս հրէաներու շտապած
ուղիները Տրէյֆիսի թանկագին
կընծային քան միլիոնաւոր ժողո-
վուրդ մը որ անմիջական ու նիւ-
թական օգուտ մը չի խոստանար
այդ ինքնակոչ մարդասէրներուն:
Եւ հազարներէր հոս կը վերջանայ
Ս'ենք ասկէ զատ ուրիշ գաղտ-
նիք մը չենք կարող ընդշնարել,
երբ գործուած չարիքներու բաղ-
դատութիւնները անհունապէս ան-
համեմատելի են: Նեարին մէկ
կողմը կասկածելի հրէայ մը, իսկ
միւս կողմը միլիոնաւոր անմեղ ազգ
մը իր 300000 նահատակներով,
50000 որբերով, և բիւրաւոր չն-
պարտ բանտարկեալներով որոնք
քրիստոնեայ աշխարհի պաշտպա-
նեալներն են դաշնագրութիւն
ներով: Բայց այսօր ասոնք
կը լքուին ու Տրէյֆիսի
կը պաշտպանուի, պաշտպանու-
թիւն մը որ միջազգային օրէնքով
գոյութեան իրաւունք չունի իսկ:
Սակայն ո՛վ է իրաւունք փնտռողը
երբ դեղնորակ ոսկին մէջտեղ կը
խաղայ և կուսակցական գէժձ
չահերը այդ կը պահանջեն: Ահա՛
քրիստոնեայ աշխարհի արդարա-
սիրութիւնը, և ահա հանրային
կարծիքի տխուր կողմը:

Թ. Գ.

Թիրաւի Լոնտոնայի մէջ սկսան
հաշուել թէ ի՞նչ պիտի արժէ Թը-
րանսվալի այդ պատերազմն և թէ
արդեօք եղած ծախքերն զոհա-
ցուցիչ հետեւանքով մը պիտի գո-
ցուին: Անգղիական պատերազմնե-
լըն աժան գնով չեն լինիր, 1868ի
Հապէշիստանի պատերազմն՝ ընդ-
դէմ Թէոդորոսի, 200 միլիոնէն ա-
ւելի արժեք և սակայն միայն 1/4
հազար զինուոր չործածեցին, ու-
րոնց մեծամասնութիւնը տեղացի-
ներ էին: 1882 Արաբիի դէմ պա-
տերազմն 340 միլիոն արժեք, ուր
պէտք եղաւ 20000 զինուոր գոր-
ծածել: Այս վերջինս երեւելի ե-
ղաւ մանաւաղ երկու փայլուն
գործողութեամբ՝ Ալեքսանտրիոյ
ռաբակոմութեամբ և Թէլ-էլ-քէ-
պիւրի պատերազմով, որոնցմէ յե-
տոյ, առանց ուշանալու, էքսպրէս
չոգեկառքով, անգղիական բանա-
կըն արշաւեց Եգիպտոս—Գահիէի
վրայ, որու դռներն բացուած է-
ին Անգղիացոց մօտենալն խելով:
Բոլորովին այս կերպով չը պիտի
լուծուի խնդիրն Թրանսվալի մէջ:
Ալեքսանտրիոսի պատերազմն յո-
րուս Անգղիացիք կը գտնուէին
ինքզինքնին պաշտպանելու յաւակ-
նութիւն ունեցող անձանց դէմ,
612 միլիոն արժեք Անգղիոյ, եւ
Մ'օրնիկն Լեաւորը այս եղելու-
թեանց վրայ հիմնուելով, Շամ-
պէնլէի այնչափ բաղձնացած պա-
տերազմն՝ 1800 միլիոնի կլորիկ
գումարով կը գնահատէ: Այդ պատ-
կառելի թիւն մտածել տալու է
Անգղիային:

Անկիւ—Սաքսօն զօրեղ ցեղն, ու-
րու յատկութիւններն յաճախ մեղ
կը գովեն, թէ շատ ամբարտաւան
է և թէ շատ համբերող՝ երբ կը
գտնուի այնպիսի մարդոց առջեւ
որք որոշած են իրենքզինքն պաշտ-
պանել: Ոչ թէ որովհետեւ նա կը
վախնայ հարուածներէն —ցեղն
պատրաստաւոր է—այլ՝ ընդհան-
րապէս նա կը սիրէ դժուարու-
թիւններն պարզել, իրեն կը թուի
թէ դրամով կարելի է ամեն բան
ընել և ամենայն ինչ ունենալ:

Նա ժամանակաւ սովորութիւն
ըրած էր ուրիշներն կուռեցնել և
օգտուիլ իրեն զօրացած հարուած-
ներէն: Ժամանակ մը գերմանացի

իշխաններն իրեն բաւական նիւթ
մատակարարեցին, միայն բացարձակ
պէտքի ժամանակ նա ձեռք կ'առ-
նէր գործն այնպիսի եռանդով մը
և այնպիսի խստութեամբ զոր Ֆը-
րանսա չպիտի կարենայ մոռնալ,
վասնզի դեռ անոր նշաններն կը
կրէ, վերջապէս՝ Անգղիա առան-
ձինն, դժուարութեամբ գործ մը
կը սկսի: Նա կը սիրէ դաշնակից-
ներ ունենալ դժուարութեանց հա-
մար: Նա անոնց կը վերապահէ վը-
տանգներն, ի պահանջը հարկին
կը թողու որ պակներն ալ վայել-
լին, բայց նա իրեն կը վերապա-
հէ նիւթական առաւելութիւննե-
րն:

Թրանսվալի խնդրոյն մէջ դըժ-
բաղդութիւնքն այն է որ, ինքն
առանձին կը գտնուի Պօլսններու
դէմ, չը կրնար մէկու մը վրայ յե-
նուլ խեղդելու համար, և մանա-
ւանդ կը զգայ թէ ո՞՞րք գործու-
ելէն յետոյ, պիտի գտնուին մար-
դիկ որ իրմէ հաշիւ պիտի պահան-
ջեն և չպիտի թողուն որ խաղա-
ղութեամբ մարսէ:

Զօրավար Կալիֆի օրակարգն
Պատերազմական միջոցներ, փա-
րիզի, Լիօնի զինուորական կառա-
վարիչներու, ինչպէս նաեւ հրա-
մանատար զօրավարներու ամեն-
քին հետեւեալ օրակարգն յրկեց:
«Ընդհանուր հրաման՝ բանակին.
«Մ'իջադէպն գոցուած է: Զին-
ուորական դատաւորներն, ամեն-
«քին յարգանքն վայելելով անկախու-
«թիւն արտասանեցին, Մ'ենք ի-
«րենց վճռոյն առջեւ խանարհե-
«ցանք:—Մ'ենք պիտի խոնարհինք
«նաեւ այն եղելութեան առջեւ
«զոր գլխութեան զգացում մը ներ-
«շնչած է Պ. Նախագահին—: Այլ
«ևս պէտք չէ խնդիր լինի վիճա-
«բանութեանց:
«Ուրեմն՝ կը կրկնեմ, արկածն
«վերջացած է:
«Ես ձեռն կը խնդրեմ եւ եթէ
«հարկաւոր ըլլար ես ձեզի պիտի
«հրամայէի այդ անցեալն մոռնալ,
«միայն ապագայն մտածելու:
«Ձեր ամենքին հետ, իմ ընկեր-
«ներըս, ի բոլոր սրտէ կը գոչեմ,
«կեցցէ բանակն» այն որ եւ ոչ մի
«կուսակցութեան կը պատկանի,

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Բարիզ, 12 սեպտ. 99
Անգղիացիք եւ Պօլսք
Միայն վերջին յոյս մը կայ Ափ-
րիկէի մէջ խաղաղութիւնն պահե-
լու, այն է Անգղիոյ տեղի տալն
Թրանսվալի Պօլսներու և Օրան-
ժի պետութեան հաստատուն կամ-
քին առջեւ:

«այլ միայն ֆրանսայի»

Հերկոյ հրամանագիրն պիտի կարգացուի ֆրանսական բոլոր զորանոցներու մէջ, առաջին կարգի զօրաց:

Ա. Սկսի եւ Մ. Դալիթ-Բեկ

Ֆրեզնո, 31 օգոստ. 99

Նիւ Եորքէ բարեկամ մը ինձ կը գրէր անցեալ օր, թէ վերջերս Գերմանիայէ Հայ Ուսանողներ Նամակ մը հրատարակած են ձեր պատուական թերթին մէջ՝ բողոքելով թէ իրենց ի ներքին պատ Զէյթունի ինձ գրկած 133 Ֆրանսական ընկալադիր չեն ընդունած եւն. եւ թէ Տիգրիսի այժմեան խմբագիրը այս մասին իր անսեղեակ լինելը լայտնած է հետաքրքիր ազգայիններու: Աւելորդ է րեւել թէ՛ կեղծողն է հետի լինելով վերջերս ԻՐԱՆԻԱՆԻՆԻ կարգադրու պատեհութիւն չեմ ունեցած եւ յեշտալ բողոքագրի մասին շատ որոշ գաղափար մը չունիմ. բայց այսու հանդերձ կը խնդրեմ որ հաճիք այս մի քանի առոյգներու անկիւն մը շնորհել Ձեր թերթին մէջ, ի գիտութիւն որու որ անկ է:

Գերմանիայէ ինձ գրկուած 133 Ֆրանսական ինձ հասած է ժամանակին, հրատարակուած է ՏԻԳՐԻՍԻ մէջ եւ յանձնուած Տ. Թալաշեանին, որոյ ինձ ասուած ընկալադիրը պահած եմ թուղթերուս մէջ ի Նիւ Եորք: Տիգրիսի այժմեան խմբագիրը, փոխանակ անստույգ պատասխան մը տալով, եթէ բարեհաճէր Տիգրիսի ին թերթուս մէջ փնտռել այդ հանգանակութեան ցուցակը, պիտի կարողանար գոհացում տալ իրեն դիմող ազգայիններու, որոնք տեղի չպիտի տրուէր այս անտեղի միջադէպին: Տ. Թալաշեանէ իմըստացած ընկալադիրս, ի հարկէ չէի կրնար Գերմանիա դրկել. ես պարտական էի պահել զայն, ինչպէս որ պահած եմ այն ամեն գրամներու ընկալադիրն զորս յանձնած եմ Յանձնախմբի գանձագետին: Եթէ հարկը պահանջէ, վերադարձիս յիշող ընկալադրի պատճէնը կը յղեմ ի հրատարակութիւն եւ թերթիս Տ. Թալաշեանի սը պիտի բարեհաճի այս մասին երկտողով մը յիշեալ ուսանողներուն գոհացում տալ:

Յ. Էնիւնեան

Նախկին խմբ. Տիգրիսի

Պորկազ, 13 սեպտ. 99

Տեղւոյս կրթական գործը հեռի է գոհացուցիչ վիճակ մը ունենալէ, հակառակ թաղ. խորհրդին բարի ձգտումներուն, յաջողեցաւ դարձեալ նախորդ տարուան յարի ծաղիկ դասատուն վարժարանի սեմէն ներս սպրդելու, օձի գալու, լուսններով ու վարժապետի մը բուրով լին անվայել միջոցներով. եւ թէ հրեք կարելի է դասատու համարել բաղդալինդի մը, որ դիպուածով վարժապետական ասպարէզը ընտրած է իր շահատակութեանց յարմարագոյն միջոց:

Մի քանի տղէտ տեղացիներ, որոնք իրենց մայրենի լեզուն իսկ չեն գիտեր, որոնք հոգաբարձու ըլլալու դժբախտութիւնը ունեցած են. օղիներու ոգելից ազդեցութեան տակ, Արմէն Շիտան դարձեալ դասատու կընտրեն, ու կը վաւերացնեն թղթով մը, որուն վրայ վստահած. մեր պ. դասատուն կը փութայ վարժարանը ընտել և պաշտօնը վերստանան. լուծիքը ընել առանձն ուշադրութիւն դարձնելու այն ընդհանուր դժգոհութեան, որ տարածուած է ժողովրդեան ամեն դասակարգի և խաւերու մէջ:

Վարժարանը բացուած է քանի մը օրէ. հետէ. բայց չերեւիր հոն, աշակերտութիւնը: Դրոշք և աշակերտք ձայնակցած են այլեւս. և աշակերտք չեն յաճախիր վարժարան. աւելի լաւ համարելով լծափառի փողոցները, քան թէ անփառունակ ուսուցչի մը աշակերտիլ: Ոմանք ալ Պուլկարաց վարժարանը արձանագրել տուած են զաւակներն:

Յաւալի է անտարակոյս, որ կարգ մը անհեռառեա անձնաւորութիւններ իրենց կոյր կիրքը

յազեցնելու համար վարժարանը կը յանձնեն ազիկարի մը, և այդպէս պատճառ կըլլան վարժարանի յետադիմութեան. և նոր սերունդին օտարացման: Չինք գիտեր երբ պիտի հասկնան իրենց սխալը. և միանալով միմեանց հետ, վանելով իրենց մէջէն հակառակութեան ոգին, և գալթակընթեան պատճառները, պիտի աշխատին կրթական գործին յառաջացման, որմէ կախում ունի ազգի մը ապագան:

Պիճակ

ԿԻՆԻԶԱՐ

ՈՂԻ ԱՌԵՆԻԱՆԻԱՆ ԱՂԱՅԱՅ ՄՕՐ

Դեռ երեկ չէն էր եւ ուրիշ մըր տուն, իմ խեղ միտմիտ նըստուկ մըլէր դուն. էսօր սուգի մէջ մըր բոլոր ուրիշ փու ապով հառչէ. կը քաշէ հարաւի վախ իմ խորտակի մէջ հատիկ կուլօ. Բոցան իմ աչքեր, տարաւ զքի ձագօ:

Տրուիրք տարու, տեղքը խորտակի, Թըշիւր Արամետու մանին խնձորիկ Ծօրօր կալու պէտքէն մանաւորիկ Ծէկիկ են ծածկող, դուն մըր տան ծաղիկ. իսկ միկա ո՞ր ես. ո՞ր ես իմ կուլօ, վա՛յ իմ արեւուն, տարաւ զքի ձագօ:

Վըր սկստած ճակարդ փէկըտար գաւաթ, ձըղերն էր սրբաւ, օրթէն էր արծաթ. հալաւ ու քէմէր քըզի կէր հազար, Ապըրջան ու շաքը, դինդ, նըխուշ մեղար:

Սըրեց զքի օտար, իմ պէպա՛խտ կուլօ, Փըրցուց զիմ ճիկար, տարաւ զքի ձագօ:

Սարայ, Ձըրտուր ըմբէն պատանի Սափափար դառնայ, զրոյէ մատանի, Խորանց մէկ լէ չէ՛ քըզիկ արծաթի, Ձըր վարդերիսցին հայս պիտի տանի, Բայց, ա՛խ կը խելիմ իմ պէպա՛խտ կուլօ:

Եկեր կը տանի զքզի քուրդ ձագօ:

«Հաւա՛ր, Աղաճա՛ն, հաւա՛ր, ու՛ն Մի՞րօ, Արի՛, նորընծայ, ե՛լ ըշտապ ա՛բօ»:

Հանդէ քուրդ եկաւ, կը տանի աւար, Թարէն ըզմիւր տուն, չո՛ւտ հասէք հաւա՛ր, Հանդէ կը տանին զիմ աղջիկ կուլօ, Ձըր աղջիկ տանի էդ գազան ձագօ:

«Ձարկէք, տօ՛ ճըժեր, էդ անիրաւ քուրդ, Ձարկէ՛ք էդ չընէր, արէք ջարդու բուրդ, Առէ՛ք կեռ, կօրալ, թի, վարոց, խարաւ, Մանգալ, գերանդի, խանջալ, թուր, հրացան, Հասէ՛ք, աղբրբարանք, տանին զիմ կուլօ, Սանամ ձգի դուրպա՛ն, զարկէ՛ք զքի ձագօ»:

Ձարկինք ու զարկուանք, բայց չանց թիւ չատ էր, Աղճօն ու Մի՞րօն վըր միջաց պատի, Արօն ու արնի մէջ թապըրակէր, Տէրտէր լէ չիւար՝ հաւա՛ր կը կանչէ, Թափան զըրկեցներ, բայց զքի, կո՛ւլօ, Ձկարցան յետ խըլել, ու տարաւ ձագօ:

Լըսի ես ըզբում յետքի ճիկ վընտաւ, Լըսիւր հարպաթ դուն լէ զիմ յետքի խաւ:

«Ետմա՛ն իմ աղջիկ, իսկի չեղնիս վատ, Ձեզնի՛ ուշանաւ, թորկիս լուս հաւա՛ր, Ձեզնի՛ մերկանաւ ճակախտ սուրբ մտն, Լա՛ւ է դուն մեռնիս քանց սիրտ զմա՛ր զօն»:

Հըմլա կասեց ու խելած կըրթէր զիմ:

Պալքիմ զիմ աղջիկ քորդուց ազատի, Կամ պարի մեռնիմ իմ աղջիկ ուղրուն, Անգու ման չըջայ, ընկայ վըր հողուն, Կորցիւր եմ զիմ ուշք, իսկ ըզքի կուլօ, Քաշկըտէ տանի էդ գազան ձագօ:

Տարա՛ն, վալէլէ՛ր, զիմ աղջիկ տարա՛ն, Ձիմ ճրաղ ընցուցին, զիմ տուն՝ րե՛կ վէրան:

Տարա՛ն զմերուկ լէ, տարա՛ն տապա՛ն, տուն, Տապիւ վըլէն գրեցին, «Կուլօյի ուղրուն, Տարա՛ն զիմ ջոխտակ աչից լուս կուլօ, Մըրթի քու ջոխտակ աչից լուս, ձագօ»:

Վայլըմըն կուլօ, զիս թուրկիւր պէզաւ, Կիլամ զքու սեւ բախտ, քաշեմ սիւս զար:

Սոզի՛ չէր ծնի, իսո՛ղի մեռնէր դուն, Դանց եղնէր զերի անիրաւ քըրդուն, Սո՛ղի չէր խորտու, իմ աղջիկ կուլօ, Պէլքիմ չէր տանի զքըզի չուն ձագօ:

Է՛րկինք, իմալ դաւն իչեցիր զէդ գիր:

ԲՈՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (14)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՀԱՅ ԿԵԱՆԲԵ ՄԱՏԿԵՐ ՄԵ

— 0 —

ՄԱՍՆ Բ.

Թ.

Յովնանէս աղա Աքեա բերդարգելութեան դատապարտուելէն եւ գալ հաստատուելէն առաջ՝ մարդասիրական հակումներ ունէր, անունի որ իր ըրած իրութեան եւ խորհրդատուական օժանդակութիւններուն մէջ խտրի չէր գնէր. առեւտրական մարդու ուղղութիւնը ռենէր, եւ նոյն այդ առեւտրական հասկացողութեամբ ազգային մասնաւոր շկատումներով չէր ընէր իր օգնութիւնները հայազգիներու. եթէ կար բան մը որ զինքը հայութեան հետ անքակտելի կերպով կապած էր, առաջ եկեղեցին էր. Յովնանէս աղան բարեպաշտ ու երկրաւած էր: Հաս աւելորդ չենք սեպեր ըսելու որ գաւառներու մէջ ալ փոքր կարգ մը սոփիստակաւ-ազատամտական շարժապիւնքներուն ուրեքեք օրերին էր ինքը վա՛յ անոր որ իր ներկայութեանը ելլալու եկեղեցիի եւ Աստուծոյ գոյութիւնը աւելորդ պէտք մը համարէր. անոր է՛ն կտրուկ պատասխանը կիծու հեղեղութեամբ մը աս էր.

«Տղաս համոզումով չէ նէ նոր գաղափարի, նոր մարդ երեւեալու համար է որ աս տեսակ մօտա բաներ կը խօսիս կորս»:

Իր խորաթափանց պարզամտութեամբ աս հակիրճ պատասխանով կարգ մը թեթեւօտիկ ցաւազարներ լոցեցուցած էր:

Արշիպիղագոսի կղզիները հանդիպելէ հետք Ալի Սաիպ-Փաշա շոգենաւի Աքեա բերած եւ արդէն անկից առաջ բերդարգելութեան դատապարտուած հայ բանտարկեալները տարօրինակ յեղաշրջում մը բերին իրեն մէջ. անկեղծ ըլլալու համար անոնց հետ քանի մը ամիսներ չփութ ունենալէ հետք համոզուեցաւ որ հայ էր, մեծագոյն պարտականութիւններ ունէր իր պատկառնած ցեղին շկատմամբ, թէ քիչ անգամ այդ պարտականութիւնները կատարած էր, թէ իր անձնական զրգաբաղդութիւնը իր ազգային աննախանձելի վիճակին արգասիքն էր, թէ Հայրենիք մը կար որոյ ազատագրութեան հետ սերտ առնչութիւն ունէր իր անհատական երջանկութիւնը:

Կը ցուէր որ, տարիներ առաջ, իր երկտարադակն շրջանին մէջ այս տեսակ մտածումներով չէր սոգորուած: Դադափարը որ ունեցաւ. իրեն համար նոր էր, սակայն շատ շուտով՝ մարտեց

դոյն:

Օրուան մէջ ժամերով հայրենասիրական միտքի կը քաղէր, նախ զինք շրջապատող դատապարտեալներէն որոնց բացատրութիւնները քիչ հաճախ անբաւական եկան իրեն իր անգուսպ հետաքրքրութիւնը եւ հայրենասիրական ուսումի ծարաւը յազեցնելու համար:

Աքեա բերումը յեղափոխական թերթիւր իր օրական զբաղումի մեծագոյն նիւթը կազմեցին: Ձարմանալի ընթերցասէր մը դուրձաւ ան. սակայն ոչ երբէք կոյր հետեւող մը. իր կարգաքանդութեան ընտել չլլացաւ. իրեն կարծիք ու գաղափար ծախողները, որոց մէջ զփաղաղարար կուրօքէն հետեւողներ շատ կային, աստեղ մը հաճախ իր բերան մնացին տեսնելով որ երբեմնի հաշիւներով միայն ապրած այդ կապիտալիստը, գաւառացի պոռթուան հուշուական ճշգրտութեամբ լուրջ կերպով տրամ բանող հայրենասէր մը եղած էր. «միայն թէ պահպանողական հովիւ ունի» կըսէին. եւ այս անոր համար ազատական սլացքներ փոխող անամէջներու օգոյնի ծրագրիներուն վրայ կը խնդար, գործնական ուղղութիւնը պահանջէր. գործունէութեան լըջութեան վրայ կը ծանրանար, ուժեր կանոնաւորապէս պատրաստելու խոր

հուրդ կըլտար վերջապէս յեղափոխական անունով, այդ դրօշակին տակ լըլուծելիք ձեռնարկներու եւ արգասիքի մէջ համամատուցութիւն կը փնտռէր:

Աքեա աշտորուած Դուս. Դաւիթ ցոյցի հերոսներէն մին՝ որ Յովնանէս աղայի վրայ լաւ տպաւորութիւն ունէր զոր ձած եւ փոխադարձաբար ինքն ալ անոր գործնական միտքերու համակրած էր, օր մը կարծիքի փոխանակութեան մը պահուն ըսաւ անոր թէ Պոլիս առիթ ունեցած էր Ակնցի երկտարաքի մը հետ ծանօթութիւն հաստատելու որ զրեթէ միեւնոյն միտքերը չ'այտնէին ինչ որ Յովնանէս աղան:

Երբ Յովնանէս աղան ակնարկուած երկտարաքին Ակնցի ըլլալէն հետք քրքրուած անոր անունը ուղեց իմանալ, Վահրամի անունը դուրս եկաւ Նոյն հետայն արցունքի քանի մը տալ կաթիլներ ուղեքէն կաթիլեցին:

«Վահրամ, . . . ուրեմն անկից փրկուի է. կեանքի դժպէսի խաղերուն բնականաբար կուրծք տալով կարող եցած է վրոգոււմ հայթայթել ան տեսակ մայրաքաղաքի մը մէջ ուր մըր ցումը ու պայքարը գիրար կը հալօժեն. անկից զո՛ւ մըն է ինձի հասարակական գաւառականութեան եւ բռնութեան դատալիք չէ եկեր այլ աւելի կուս կերպով յարեր է ազգային ոգիին»:

Ե. Կաւառապետ

(Շարունակելի)

Իմալ մօր Է՛ղբիկայ սիրուն արիւր փորձ.
Հորի՞նք չի՞նք զէջ գազան ազգ զորդ.
Էրեւոյ ջնջել զէջ գազան ազգ զորդ.
Է՛րեւոյ ջնջել զէջ գազան ազգ զորդ.
Պարի կուլ առաջիկ զիմ ազգիկ կուլ:
Պ Ե Ր Ը

Բառական ծանօթութիւն

Ինչ—մօտ. ժողովրդ —կը իտեք. ուս-
պոյ—պատճառով. կուլ—կուլ, իրար
մէջ—կը նմանին. շօրա—նազանք.
Վիկա—հիմա. ապրտջան—ապարտջան.
շարի, մանուկ. գիւղ—օդ. պիպիս
—դժբաղդ. աքօ—մեծ հայր. ճըծեւ—
աղաքներ. կոքալ—հաստ գաւազան. լի-
քաց—կանակի վրայ. պաւտ—ինչեւ.
դըրկից—գրադի. ճիկ—ճիկ. իսկի—բը-
նաւ. կըրկայ—այսպէս. սնկողման—
յաւկարծ. վալիկի—աւաճ. ընցու-
ցիմ—մարտիկ. շապկաւոր—գերեզ-
մաւոր. վալլոր—վալ/նա. պե-
գալ—անհատկութ. խօզի—հրաւիր թէ.
իմալ—ինչպէս. իշեցիւր—նայեցար. հո-
րի—ինչպէս:

ԱԶԴ


Յառաջիկայ սեպտեմբեր 19ին
նոր թիւով. խորհրդի մը ընտրու-
թեան պիտի ձեռնարկուի Սահմա-
նադրութեան օրէնքի համաձայն,
ուստի այս առթիւ թախանձագին
կը խնդրեմ որդոյ հասարակութե-
նէն, որ բարեհաճի ազգասիրա-
բար, Ս. Պատարագի աւարտումէն
քիչ ետք, նոյն օրը Ալգ. Վար-
ժարան գալ:

Ամեն անոնք, որ ընտրուելու ի-
րաւունք ունին, կը սիրեմ յուսով
որ ներկայս իր հրաւիրագիր հա-
մարձով կը փութան հանգէպ ազ-
գին ունեցած պարտքերն յեշտալ
օրը խղճի մտօք կատարելու:

Մնամ ուղիծարար

Մարտիրոս ԲՅԻ. Մարտիրոսեան

ՆԱՍԱԿ ԽՄԲԱԳՈՒԹԵԱՆ



Կարգացի ԻՐԱՆԻՆԻՔ ազգագույն լը-
րագրոյ 8 սեպ. 68 թուոյն մէջ 3է-
լէկան ստորագրութեամբ, տեղւոյս
ազգային վարժարանաց մասին գրուած
յօդուածն. եւ պարտ յանձին կը սեպեմ
Պ. Յօդուածագրին յիշած քանի մը
մոլի մնացած կէտերուն վրայ բացա-
արութիւն տալ. վասնզի անոնցմէ մին
ալ եւ էի, որ պատ. հոգաբարձութեան
դիմած էին, Պուլկարեւնի ուսուցման
համար իրենց դիտողութիւնները ընե-
լու:

Եւ հոգաբարձութեան դիմած էի, որ
ինպատ ազգային մանկուոյն չընեն
մեր ազգային վարժարանին մէջ վար-
ժապետ մը, որ մեր մայրենի լեզուն
բոլորովին անտեղեակ է, ու չի կրնար
օրտակար ըլլալ. սա ապացուցուեցաւ:

Հոգաբարձութիւնը, իրաւացի գտաւ
իմ տուած բացատրութիւնս, բայց ցաւ
իմ հիմա իմացուց թէ, Պուլկարեւնի
դասաւանդութեանց մասին, անցեալ
թաւոյ չըլանին մէջ տնօրէնութենէն
դիտողութիւն մը իսկ չգտնալով ար-
ձանագրութեանց տեսակին մէջ, այս
տարուան չըլանին համար ալ զանի
վարձած է: Եւ եթէ պէտք ըլլայ Պուլ-
կար դասաւանդութեան, պէտք է իր
ամբողջ տարեկանը վճարել:

Այս փաստերով հոգաբարձութիւնը
սխալ չկրնար արդարացեալ դրժ-
բազմաբար, այլ պէտք է դարման մը
դնեն թանի որ եղածն եղած է:

Եւ կ'առաջարկեմ որ, Պուլկարեւնի
դասաւանդութեան բարձրագոյն կարգերուն
միայն դասախօսէ, քանի որ փոքրիկ
նորուն համար բոլորովին անհասկնալի
է. ուստի անոնց համար հարկ տնհրածեշտ
է, որ երկու լեզունները միանգամայն
գիտցող ուսուցիչ մը յատկացուի. ա-
սանկով թէ՛ եղած մեծան մ'առամբ կը
դարմանուի եւ թէ՛ մանկտին չը տու-
մեր:

Սակայն գտնիք որ, այս նոր ու-
սուցչին վարձ վճարելու վարժարանի
պիւտճէն չի ներեր. ուստի ըստ իս,
միակ սա միջոցը կը մնայ, այն է վառ-
նայաբնակ ու պուլկարեւնի գիտցող
հայ երիտասարդներէ միոյն կամ երկու-
քին առաջարկել ու խնդրել, որ բա-
րեհաճին ի սէր փոքրիկներու անձնու-
իրաբար օրական մէյ մէկ ժամ ստանձ-
նել վարի կարգերու դասախօսութիւ-
նը:

ԱՍՏԴԻՆ

Վառնա, 16/28 սեպ.

ՈՒՅ ՍՍ. ԱՆԽՈՐՀՈՒՐԴ ԵՍԻՓՈՒՍԸ

Շարժում կամ շարժիլ լաւ բան
է, երբ նպատակաւորութիւն է, իւր
լուրջ մտածութեան արդիւքն կամ
հետեւանքն է. սակայն ընդհակա-
ռակը որքան ալ անտանելի եւ ան-
ճառի, երբ յախուռն եւ ինքնա-
հաւան մտքիւր աւագասիք է:

Հապա սա խեղճուկ Շարժումը
հակառակ իր հասարակ մահ-
կանացուի մը յատուկ սահմանա-
փակ մտքին՝ կենէն ամեն ինչ վըճ-
ուել, միայն իր քմահաճոյքին հը-
պատակելու կամ իր արբանեակ-
ներու առաջ խոնկ ծխած ըլլալու
համար: Անիկայ շատ ճիշդ չէ՞
միթէ, քանի որ «Շարժում» իր
անցեալ շարժումն թիւին մէջ,
ծանօթութեան մը մէկ անկիւնը
ելաւ կանխահաս վճարողականու-
թեամբ մը ըսել թէ՛ անցեալ տա-
րուայ Ալգ. վարժարանի ուսու-
ցիչները ներկաներէն (մեզ նորե-
րէս) աւելի կարող անձնաւորու-
թիւններ ըլլալին բացորոշ է: Ինչ
կրնանք ըսել մենք այս անխոր-
հորդ «Շարժում»ին, բայց եթէ
պօռալ իրեն որ չ'աճապարէ, գիտ-
նայ իր չափը, խօսածը ու ըսա-
ծը: Մէկ խօսքով կը խնդանք իր
վրայ, փոխանակ իրեն հարցնելու
թէ՛ ուսկից մեզ այնքան մօտէն
կը ճանչնայ եւ կամ երբ անցեալ
դասաւանդները քննած է, մեզ ալ
քննելու կարող եղած է, մեր իս-
կական արժանիքներուն վերահա-
սու ըլլալու համար:

Պ. «Շարժում», կեցէ՛ք, անար-
ժանաբար Ձեզի խրատ մըն ալ
տամ, եթէ կուզէք ասկէ վերջ,
փոխանակ ասանկ խնդիրներու
մէջ պաշտպանողի մը բոլորովին
յայտնի կերպարանք առնելու,
հաւել չ'ուզած «Իրաւունք» ԼԸ-
րագրոյ օրինակին հետեւեցէ՛ք.
տեսէ՛ք թէ անոր խմբագիրը իր
թերթին մէջ զէ՛թ հիւրընկալած է
անանկ գրութիւն մը, որ ներկայ
ուսուցչական մարմնոյն կարողու-
թիւնը ակնարկելով՝ զայն աւելի
վեր դասէ կը անցնալինէն: Ձեզն
ատանկ բան մը միայն դուք կա-

րող էք ընել. Ձեզ նման ամենա-
կարողի մը գործն է այն:

Կենէնք անուղղակի կերպով տե-
ղային ուրիշ թերթ մը հարաւա-
ծել, որովհետեւ անիկայ կը հիւր-
ընկալէ իրեն ուղղեալ նամակ մը
որ ներկայ ուսուցչական մար-
մնոյ վրայ բաւական լաւ գաղա-
փար մը ունենալով ապագային
տնկէ մեծ յոյսեր կալընկալէր.
այս չէ՞ միթէ ձեզ փորին ցաւը.
Բայց ո՛չ, ասի մեծ մեղք մը չէ,
երբ աչքի առաջ ունինք ձեր մօ-
տակալ թիւերը, որոնց մէջ ոտք
ձեռք կտրած մինչեւ երկինք
բարձրացուցիք անցեալ տարուայ
դասաւանդները, անոնք սապէս կա-
րող մարդիկն են, անոնց նմանը
գտնել ամբողջ Պուլկարեւնի մէջ
կարելի չէ եւն խել մը գովասանք-
ներ կարգաւորվ եւ պահ մը ախքան
առաջի գացիք, որ գաւառիկի նը-
ման լեզու չ'ունեցող մեր սաները
ու սանուհիները խօսեցնել տալով
հանրագրութիւններ ժողովեցիք.
Ասոնց ամենը՝ գիտողը ժամանա-
կին դիտած է. զիտցողը գիտէ
նաեւ թէ՛ ինչ պատճառ ունիք
այս անգամ եւս մեզի հետ բռնուիլ
փորձելու, երբ արդէն խնդիր չը
կար: Բայց դուք կուզէք խնդիր
հանել. ջուր պղտորել որսի ելնե-
լու համար:

Վառնայի Ալգ. վարժարանի
նորընտիր ուսուցիչներէ միին

«ԻՐԱՆԻՆԻՔ»Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Տ. Յ. Թ. — Ձեր նամակները ըստա-
ցանք. հանգուցեալ Յ. Չաքրեանի դէմ
զրպարտիչ թերթի խրճակումին առթիւ
Ձեր վայրոյթը արդարացի է. այդ մա-
սին ուրիշներ ալ գրած են, բայց ա-
ւելորդ համարեցինք հրատարակել:
Ձգեցէ՛ք կենդանի մեղադրեալ թող մե-
ղանքու հետ կուրին:

—Տ. Գ. Տ. Իրաւունք. — Ձեր առա-
ջարկը ուղղեցէ՛ք տեղւոյ մեր գործա-
կատարին, որ թերթերը ծախել կու-
տայ:

ԼՐԱՔԱՂ

Պարսկաստանի Սպահան եւ Ա-
տրպատական թեմերուն մէջ ապրող
Հայոց վիճակագրութիւնը պարու-
նակող պաշտօնական ցուցակէ մը
հետեւալ թուանշանները քաղուած
են:

Ատրպատական Սպահան Գումար			
Դպրոց	34	10	44
Դահլիճ	63	116	169
Եկեղեցի	102	84	186
Դպր. եւ զգ.	135	99	234
Հայ բն.	30400	34203	64603

Այս ցուցակէն դուրս են Պապա-
կան եւ Բողոքական հայերը:

—Արմաշի Դպրեմանքի մէջ
աշակերտութեան ընդունուելու
համար խնդրագիր ներկայացնող 60
պատանիներէն միայն 20ը յետ
քննութեան ընդունուած են. ա-
սանց 2ը Պոլսեցի եւ 18ը գաւառա-
ցիներ են:

—Նով. Վրէմիա հաղորդած է
թէ նոր որոշման մը համեմատ,
միջնակարգ ուսումնարաններու մէջ
կրննց չըլանը աւարտած 300 ու-
սանողներ Մոսկուայի համալսարա-
նին մէջ չեն ընդունուած. ասոնց
մեծագոյն մասը Հայեր ու Հրէա-
ներ են:

—Մեր նախորդ թիւով հաղոհ-
ածին համեմատ Ուրմիոյ մէջ
Բողոքականութիւն ընդունող Շա-
ղոհան քահանային եւ Գրիգոր
կարսեան վարժապետի մասին «Մը

շակ»ի մէջ հետեւեալ տողերը կը
կարդանք.

«Մանրամասնութիւնները չը նայած
դեռ եւս լաւ յայտնի չէ», բայց ինչ որ
էլ լինի դա վերջապէս ստորութիւն է.
Ինչ է նշանակուած՝ մտնել իդէալիստի
դիմակի տակ եւ պաշտօնի, մի փոքր
հացի համար, կրօնը, դասաւանդութիւնը
փոխել. . . Սոսու ամենայնիւ այլ եւս
փաստ է, որ դասաւանդութիւնը այ-
ժմ մեզ համար մի տեսակ չարիքի
բնաւորութիւն ստացել. ազգը սեր-
հատուած է, անդամալուծվում ու քայ-
քայվում. . . պէտք է այդ չարիքի
առաջն առնելու շտապել: Այս մասին
թող լաւ մտածեն մեր ձեռնաստ ան-
ձինք եւ հաստատութիւններ, մանա-
ւանդ մեր հոգեւոր իշխանութիւնը այ-
ժմ աւելի քան ուրիշները բարոյա-
կան պարտք ունի այդ պէտքը հոգա-
լու:

«Ինչ երէկ մենք լսեցինք եւ կար-
դացիք Շաղոհան քահանայի դաւա-
նափոխութեան պատմութիւնը եւ այ-
սօր նոյնը լսում ենք Ուրմիոյ ինտէլի-
գէնտ համարուած ուսուցչի համար:
Հեռու չլինի գուցէ եւ ան օրը, որ
մենք կը լսենք թէ Ուրմիոյ ողջ հայու-
թիւնը մտել է հաւատարմութեան գիրկը,
որովհետեւ իրանց հովիւները դեռ քը-
նում են. . . »

—Քանի մը թիւ առաջ այս սիւ-
նակի մէջ հաղորդած էինք թէ
Գաղատիայի (Էնկիրի) վանքին
Որբանոցի 12 որբերը կեսարիոյ
Ս. Կարապետ վանքը փոխադր-
ուած են. այժմ կը տեղեկանանք
որ այդ փոխադրութիւնը խեղճ
որբերը նօթութիւնէ ու մերկուլի-
նէ ապատելու նպատակաւ եղած
է. որովհետեւ Առաջ. տելապահ
հայրը հակառակ իր ջանքերուն չէ
յաջողած Գաղատիայից ի գուլթ
շարժել. այնպէս որ որբերը շատ
օրեր շական ձիթապտուղով եւ
քարի նման կտոր մը սեւ հացով
անցուցած են: Կարծեմ նոյն ին-
քըն Պողոս առաքեալ Գաղատաց-
ւոց ուղղած շատ մը յորդորներուն
ապարդիւն մնալը տեսնելով գա-
նունք «անմիտ Գաղատացիներ»
անուանած էր:

—Եւգրիտացի Յարութիւն ա-
նուն երիտասարդ մը 40-50 ոսկի
ծախսելով հնարած էր բազմա-
ունստեան ցուցագործիք մը, զոր
մենք իսկ տեսնելու առիթ ունե-
ցած էինք: Յարութիւն իր այդ
գիւտը աւելի կատարելագործելով
վերջերս Նիկոմիտիա փոխադրած
էր ու զայն իցոյց դնելով իրեն
ապրուստը կը ճարէր: Գործիքը
մէկ մէղրէ աւելի երկայն եւ չուրջ
կանգուն մը լայնութիւն ու բարձ-
րութիւն ունեցող արուեստական
բաւական հանճարաւոր սնտուկ
մըն է, որ այլեւայլ միջոցներով
լարուած է. մեծ անիւ մը ունի
զոր ձեռքով դարձուցած ատենդ
սնտուկին մէջ նոյն վայրկեանին
կ'սկսին աշխատել 32 փայտաշէն
արհեստաւորներ, կօշկակար, եր-
կաթագործ, դերձակ, կտաւա-
գործ, մանող եւն. 32 ձեռագործ
արհեստներ:

Պարտիզակի ամերիկեան վար-
ժարանի տնօրէն Մ. Չեմպլըս
1900ի Բարիզի ցուցահանդէսին
ղրկելու դիւրութիւններ խոստա-
ցել է կուսակալին կամ այլ ուր
գիմու ընելով: Սակայն ինչպէս
«Բիւզանդիոն»ի կը գրեն, վեր-
ջերս Նիկոմիտիոյ կուսակալին
ներկայացուելով այս սնտուկ,
ընծուելէ յետոյ, փոխանակ քաջա-

լերութեան, տէրը ոստիկանութեան յանձնուեր ու սնտուկը իր բոլոր գործիքներով կոտորուեցր ու ջախջախուեցր է: Ահա, թէ թուրքիոյ մէջ ինքնաբոյս հանձնարներ ինչպէ՞ս կը վարձատրուին:

— «Բնկերութեան մեծագոյն աղէտը» վերնագրով յօդուածին շարունակութիւնը տեղի անձկութեան պատճառով ԴՇ. օրուան թիւին մնաց:

ՄԻԻԹԵՆԵՎԱԿԻՅԷ

— — —

Պիւլիւն տիւննատա պու սէնէտէ պուղտայ մահուելը 886 1/2 միլիոն հէքթօրիթր հիսապ օլընմը տըր. կէչէն սէնէ 989,100,000 հէքթօրիթր իտի, հանի պու սէնէ կէչէն սէնէտէն 104,600,000 հէքթօրիթր նօգսան տըր. ֆազաթ պու նօգսանիթէն էնտիշէյն սէպէպ վերմէմէյի, զիրա կէչէն սէնէքի մահուել ֆէվրէյալտէ իտի, շիմտիքի իսէ ումուլըն իգթիվասընա քէֆայէթ իտէպիլի:

— Թիւրքիանը շիմտի խարիճէ օլան պօրճարընըն մէմուի 126 միլիոն 832,553 ինկիլիզ լիւրաը, եանի 3,170,813,825 ֆրանգա պալիզ օլըյօր: Թիւրքիա էհալիսի ու մուլէն 27,694,600 քիշի օլմաղլէ, հէր պիւրիսինէ 114 1/2 ֆրանք պօրճ իսապէթ իտէյօր:

— Բուսիատա թիֆլիստէն Գարսա գատար թէմտիտ օլընմագտա պուլընան չըմէնտըֆէր խաթիթընըն ինչասը խիթամ պուլմուշ օլուպ, պու ալըն նիհայէթինէ գատար խաթիթալ օլընպիլէճէք տիւր: Իշպու խաթիթըն մուհարէպէ իշիւն նէ տէրէճէ պէօյիւք էհէմմիլէթի օլտըղը թարիֆէ հաճէթ հօգ տըր. պու խաթիթըն ուզուլըղը 296 քիլօմէթրօ օլմաղլէ 13 թիւնէլ ալըմըլ վէ 17 քէօբիւ եարըլմըլ տըր. մալիւմ օլտըղը իւզրէ Գարսաըն մէվըղըր Բէք եիւքսէք օլուպ, տէնիզ 1734 մէթրօ վէ թիֆլիզ 1311 մէթմօ ալչագտա աըրլտր: Ինչապաթ 40 միլիոն ֆրանգ մէսարիֆ օլմուշ տըր:

— Պուլարատան վէ թուրքիա տան թիւրքիայա հիճրէթ իտէն իսլամ մուհաճիլէր Սուրէայա կէլմիշ օլմաղլէ, օրատա եէրլէշմէլէրի իշիւն էմր վէրիլմիշ տիւր:

— Գուրանը շէրիֆին պու կիւնէ գատար թիւրքիատա մաթպուտալարտա թապ օլընմասը մէմու իտի: Ասիւրէն սուտուր իտէն պիւր իրատէ Գուրանըն «Օսմանլը» նամ մաթպատտա պասըլմասընիւ իմ. թիյաղը մախսիւս վէլմիշ տիւր:

— Կէյվէտէ նուֆուս միւտիւրի Ալը էֆէնտի՝ վէրկի հասըլմընտան 28,000 զընձ զիմէթիւնէ կէչիւրմիշ օլմաղլէ 3 ալ մահպուսիլէթէ մահքիւմ օլմուշ օլտուղընը «Լէվանթ Հէրալ» տան նաղլէն Գաշաիւ տէ Պալքաւն «Թիւրքիատա իօլահաթ» սէրլէվիսը իլէ եաղմըլ տըր:

— Բուս հիւքիւմէթինին եէնի պիւր էմրի իւզրէ, Բուսիատա էրմէնիլէրէ գարշը նապէճօ լիսան խաթիթալ իտէն հաշուտի կապէթաճըլարա ճէզա թէրթիպ օլընա. ճաղընը Սէրվէթ կաղէթասը եաղմըլ տըր:

— Կիւրիտին մաթպուտաթ նիզամ. նամէսի նէշը օլընտը: տիկէր գա. նուլարա նիսպէթէն՝ մաթպուտաթա սէրպէստիլէթ վէրիլմէմիշ տիւր: Բէննա Եոքիլի վէ միւշալիլէրի (խորհրդակաշ) պու իւք սէնէլէր. տէ մաթպուտաթա պիւլիւն պիւլ. թիւնէ սէրպէստիլէթ վէրիլմէսինի ատանըն աըլ մէնֆաթալարընա մաղարաթիւլ կէօրմիւշէր:

Կիւրիտէ թէտալիլ օլընաճագ աղճէ տրահմ օլուպ, պիւր տրահմ պիւր ալթուլն ֆրանգ զըյմէթիւնտէ օլմագ իւզրէ, եաղընէն Բարիստէ տարպ օլընաճագ տըր. պու տըրահմալըն պիւր թարաֆընտա, Բէննա Եոքիլիին թապիլի պուլընաճագ: 20 վէ 10 ֆրանլըզլար ալթուլն, 5, 2, 1, ֆրանլըզ վէ 50 սանթիլմիլէր կիւմիւշ վէ 20, 10 վէ 5 լէթալըզլար (սանթիլմ) նիքէլ, վէ 2 վէ 1 լէթալըզլար պաղըրտան օլաճագլար:

— Ֆրանսայը մէշլիլ իտէն իքի մուհիմ մէսէլէլէր պու կիւն գա. թիւն հալլ օլընմըլ տէմէք տիւր: Եանի Տրէյֆիւսէ աֆիլ օլընալարա սէրպէսթ պըրազըլմըլ տըր. պու կիւն իսթէթիլի թարաֆա կիթմէյն մէզուլն օլաղը կիպի, լէսմի ֆօրմասը վէ բուլպէլէրի իտէն օլընմըլ տըր: Պուլարտան մատա՝ Տրէյֆիւսէ 4-5 սէնէ Եէյթան ատաընտա չէքտիլի սէֆա. լէթէ մուգապիլ պու կիւն հաղըգաթ պիւր սէրվէթ սահպիլ օլիյօր, զիրա Մ. Բոնտ իսմիտէ պիւր ամէրիգալը Տրէյֆիւսէ թէլէկրաֆ վէրուպ 100000 աօլար (1/2 միլիոն ֆրանգ) վատ իթմիշ վէ պուլնա մուգապիլ Մ. Ամէրի. գատա 100 նուլթ իրատ իթմէ. սինի թէքիլէ էյլէմիշ տիւր: Գէզա պիւր կաղէթաճը տահա ճէսիմ պիւր մէպալա պէտէլ Տրէյֆիւս. տան սէրկիւզէթիլին նօլմա տէֆիլէրէրինի սաթըն ալմագ իս. թէմիշ տիւր: Տէմէք Տրէյֆիւս մալէն տալի իսթիգալընը թէմին իթմիշ օլտու:

— Սլոնապուտա թիւհարըղլէ մէշլիլ օլան Աճէմ Հաճի թալի թանպուզ 55-60000 լիւրա ալըզ պօրճ իլէ իֆլալիլէթ կէօս. թէրմիշ տիւր: Հաճի թալիտէն պաշընա ալաճալը օլանլար տըր. Ֆրանսըղլեան պիւրատէրլէր 4.5000 լիւրա, Սըվաճըղլու 10-15.000 լիւրա, Գնի վէ Պէլար 2-3.000 լիւրա, Գրասթիլի 5.000 լիւրա: Հաճի թաղլիլին 17,000 լիւրա մէվ. ճուտ աղճէսի վէ խալը մուլի վար ըմըլ:

— Սապըզ Սիւպիւս գըրուլը վէ էլիէվի սըրպ օրտուսընըն սէր զօմանտանը Միլանըն էօմիւնէ սուր գաստ իտէն կնեաղէվիլին

ուհաքէմէսի խիթամ պուլուպ, սուտուր իտէն իլամ գրաթ օլընմըլ տըր: Կնեաղէվիլ իտաճա մահքիւմ օլուպ, բապուր էրթէսի կիւնիւ գուրշուլնա թուլթուլմուշ տըր. քէզա թանքէ թաիսիլ գուրշուլնա մահքիւմ. պու ա. տէմ Չէթիլէլէ գաշմըլ օլմաղլէ գըյապէն մահքիւմ օլմըլ տըր:

Քէզա Պիլկրատըն պէլէտիլէ մէմուլարընտան Բիւրա Գոլմասէ. վիշ, միւրալալ Նալթօ Նիքօլիշ, իշիլի ֆուրիլգաթ օլը Միշէլ Տիմիշ վէ չըմէնտըֆէր մէմուլը Անթօնի Ուրուսէվիլ՝ ճինայէթի թէլիլի իթմիշ օլմագ ճիւրմի իլէ 20շէր սէնէ զէնճիւրպէնտ քիւրէք ճէզա. սընա մահքիւմ օլմըլար տըր: Տի. կէր 9 քիշի (պիւր բարա) ալը ճէզալա մահքիւմ օլմըլար: Սէ. քիլ քիշի տէ 5էր սէնէլէ հիւք օլընտըլար. պուլարըն ճիւրմի ի. սէ ճինայէթին իճրա օլընաճաղընը էվիլէտէն պիլիւր իքէն հիւքիւ. մէթէ իլիթար իթմէլէլէրի տիւր: — «Բէֆօրմա» նամ պուլկար կաղէթասընտա ալթիտէքի ֆըզրա միւնտէրիճ տիւր:

«Բիւրի տաղընտա Լօրօֆա նամ քէօյճիվարընտա՝ Գրասթօ վօյվատանըն թահթը զօմանտանըն. տա պուլընան պիւր չէթէ նալէ. հան թիւրք աղքէրլէրինտէն գար. չըլանուպ ուզուլն պիւր մուհարէ. պէտէն սօնրա տաղըլմըլ տըր. չէթէտէն 3 քիշի էօլմիւշ, (վօյվատա Գրասթօ, պիւրատէրի իվան վէ լէֆիլէրինտէն պիւրի Սլօնա), տիկէրլէրի աղքէր գօրտօնըն ա. չուպ գաշա պիլմիշէր: Թիւրք. լէրտէն թէլէֆիլաթ 20 քիշի:

ՇԵՏԻՑ ԶԷԼԶԷԼԷ

իսի միլիոն լիւրա գարաւ

Իզմիրտէ սօն տէֆա վուզու պուլան զէլէլէտէն տօլալը, սօն սաթթտա ալթիտէքի թաֆսիլա. թըլալտը:

«Պու սալը սապահը սաթթ 4տէ իզմիրտէ շիտտէթլի պիւր զէլլէլէ հըս օլընտը, պիւր աղ սօնրա տէ. ֆա սարսըլտը, ինսան թէլէֆիւ. թըլ հօգ, ֆապաթ չօգ էվէր պօ. զուլտըլար. պիւր թաղըլ տըլտըլար թաֆանլար եղըլտըլար, քէզա շէհրի իհաթէ իտէն հիսարըն պիւր զըսըլ եղըլտըլար:

— Ալտընտա վէ ճիվարտա զէլլէլէ վէ սարսըլթը տէվամ իթմէքտէ տիւր. պէօյիւք զէլլէլէլէր. տէն զարաթիտէ օլան էվէր վէ պիւնալար շիմտիքի ուֆաղ սար. սընթըտան պիւլթիւն պիւլթիւնէ եղըլմագտա տըլտըլար. տէհէլթիլ զէլլէլէլէրտէն իրաւ օլան զարալըն մըզտարը 2 Միլեօն Ալթըն Ալալիլ օլըյօր: Նաղլիլիտէ 200 պիւն լիւրատան զիւտէ զարալ վար. Սէրալթէօյտէ 150000 լիւրա, քէլէ. կիտէ 1000 լիւրա:

Ալտընտա զէլլէլէտէն զարալ. տիտէ օլանլարա իտէն թէտարիքի

իշիւն թէլլէլ օլընան զօմիւսի վալի բաշանըն լէսաթիլ թահ. խընտա թէլլէլ օլընուպ 22 պիւն աթէտ իտէն պիլլէթի պաստըլմագ իշիւն գաթար վէրտի: Պու պիլլէթ լէրին 1000ի 100 զըլլէ. 5000ի 20 զըլլէ. վէ 15,000ի 10 զըլլէ տըլտըլար:

— Իզմիրտէ տալի վալի Գեւա. միլ բաշանըն լէսաթիլ թահ. տա պիւր իտէն զօմիւսի թէլլէլ օլընմըլ օլմաղլէ, միլլէթտալար. մըզտան Մատթէոս էֆ. Պալթօ. հան, թաղար էֆ. Սպարթալեան կարապետ էֆ. Արապեան աղա նասպ օլընմըլ տըլտըլար:

ԲՈՒԼԻ ԳՕԼԷՔՍԻՆ

Բուլի սքանչելի քօլէքսիօն մը ծախու հանուած է, աւելի քան երկու հազար բուլերով, որոնց մէջ բաղաժիւ հազուագիտներ. մի. ալն ալպիշմը ունց բուլի. կ'արժէ 50 ֆրանք, Գնել փափաքողները դիմել խմբագրութեանս:

ՕՓԷԼ «ՔՕԼԷՔՍԻՆ»

ՊԱԼԷՐ ԲԱՋԱՐ Ն՞ 462

Ղաշնա

Այս պանդուկը վերլիւր, մեր տնօրինութեան տակ մտած ըլլալով իր առջի վիճակը բոլ. բողին բարեփոխուած է. յաճախորդները ըստ տանալի գոհ կացուցանելու համար՝ հակառակ համեստ գներուն, մօքրութեան միջ հօգ ու խնամք կը տարուի: 10—1 ՅԱԿՈԲ ՄԻՆԱՍԵԱՆ

ՄԵՆ Վ ԻՃԱՆԱՀԱՆՈՒԹԻՒՆ



ՅՕԾԻՄ ՔՕԼԱՐԻ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷՆ ԵՐԱՇԽԱՌԻՄԱՆ Ս. ՊԱՐԴԵՆԷՆ Է 500,000 ՖՐ. ՈՍԿԻ 50,000 տոմսեր հրապարակ հանուած են, որոնց 25,000ը պիտի չահին հն. տուեալ կերպով, ներկայ տարւոյ Յունիս 9ին 1,500 թիւեր 92,680 ֆր. Յալիս 7 1,500 » 135,180 » Օգոստ. 4-5 2,000 » 241,780 » Սեպտ. 3-4 » » 309,080 » » 23-24 » » 363,250 » Հոկտ. 13-31ոյ. 16000 » 3389,040 »

Գիւնըն Են զլլան, Տրաւք	Ֆաթուր	Մէկ ու թեղ.	Մէկ ու թեղ.	Մէկ ու թեղ.	Մէկ ու թեղ.	Մէկ ու թեղ.	Մէկ ու թեղ.	Մէկ ու թեղ.	Մէկ ու թեղ.
Կէս	5	2.50	2.50	2.50	2.50	2.50	2.50	2.50	2.50
Միւր	10	5.00	5.00	5.00	5.00	5.00	5.00	5.00	5.00
Միւր	15	7.50	7.50	7.50	7.50	7.50	7.50	7.50	7.50
Միւր	20	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00
Միւր	25	12.50	12.50	12.50	12.50	12.50	12.50	12.50	12.50
Միւր	30	15.00	15.00	15.00	15.00	15.00	15.00	15.00	15.00
Միւր	35	17.50	17.50	17.50	17.50	17.50	17.50	17.50	17.50
Միւր	40	20.00	20.00	20.00	20.00	20.00	20.00	20.00	20.00
Միւր	45	22.50	22.50	22.50	22.50	22.50	22.50	22.50	22.50
Միւր	50	25.00	25.00	25.00	25.00	25.00	25.00	25.00	25.00
Միւր	55	27.50	27.50	27.50	27.50	27.50	27.50	27.50	27.50
Միւր	60	30.00	30.00	30.00	30.00	30.00	30.00	30.00	30.00
Միւր	65	32.50	32.50	32.50	32.50	32.50	32.50	32.50	32.50
Միւր	70	35.00	35.00	35.00	35.00	35.00	35.00	35.00	35.00
Միւր	75	37.50	37.50	37.50	37.50	37.50	37.50	37.50	37.50
Միւր	80	40.00	40.00	40.00	40.00	40.00	40.00	40.00	40.00
Միւր	85	42.50	42.50	42.50	42.50	42.50	42.50	42.50	42.50
Միւր	90	45.00	45.00	45.00	45.00	45.00	45.00	45.00	45.00
Միւր	95	47.50	47.50	47.50	47.50	47.50	47.50	47.50	47.50
Միւր	100	50.00	50.00	50.00	50.00	50.00	50.00	50.00	50.00

Отговорникъ Н. Драгулевъ
Печатница на Хр. Н. Войниковъ